ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 97- Ա 26 մարտի 2019 թ

ՎԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ ու 209-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի <Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանելու մասին> N 1239-Ն որոշումը

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Վանիկ Հարությունյանին 2019 թվականի մարտի 26-ին, մեկ օրով գործուղել Վերին Գետաշենի համայնքապետարան Ջոնիկ Մինասյանի դիմում-բողոքը ուսումնասիրելու նպատակով:

2.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ